ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության պետ Արտյոմ Մխոյանի՝ Ֆրանսիա (Ստրասբուրգ) գործուղման արդյունքների վերաբերյալ

Գործուղված պաշտոնատար անձ՝ Արտյոմ Մխոյան:

Գործուղված անձի զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության պետ:

Գործուղման վայրը և ժամկետները՝ Ֆրանսիա (Ստրասբուրգ), 2019 թվականի մայիսի 13-ից 15-ը:

Հրավիրող կողմը՝ Եվրոպայի Խորհրդի Մարդու իրավունքների և Իրավունքի գերակայության գլխավոր տնօրինություն:

Գործուղման նպատակը՝ Մասնակցություն Եվրոպայի Խորհրդի Մարդու իրավունքների և Իրավունքի գերակայության գլխավոր տնօրինության կողմից կազմակերպված «Դատապարտյալների պահման ռեժիմի կառավարում» թեմայով բազմակողմ հանդիպմանը:

Քննարկված թեմաները՝ «Դատապարտյալների պահման ռեժիմի կառավարում» թեմայով բազմակողմ հանդիպման շրջանակներում քննարկվել են քրեակատարողական քաղաքականության հիմնական ուղղությունների կատարելագործմանն ու զարգացմանը, ազատազրկված անձանց պահման պայմանների եվրոպական չափանիշներին, ազատությունից զրկված անձանց պատժի ծրագրման, անհատական ռիսկերի ու կարիքների գնահատման, կալանավորված անձանց և դատապարտյալների, այդ թվում նաև՝ ցմահ կամ երկարաժակետ ազատազրկման դատապարտված անձանց պահման ռեժիմին, կին և անչափահաս դատապարտյալների իրավունքների պահմանն ու նրանց անվտանգության ապահովմանը, ազատազրկված անձանց միջև երբեմն տեղի ունեցող ֆիզիկական բռնությանը, սպառնալիքի և ֆիզիկական բռնության կանխարգելմանը վերաբերող հարցեր:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝ Եվրոպայի Խորհրդի Մարդու իրավունքների և Իրավունքի գերակայության գլխավոր

տնօրինության հրավերով ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության պետ Արտյոմ Մխոյանը սույն թվականի մայիսի 14-ից 15-ը Ստրասբուրգում (Ֆրանսիա) մասնակցել է «Դատապարտյալների պահման ռեժիմի կառավարում» թեմայով բազմակողմ հանդիպմանը: Բազմակողմ հանդիպման ընթացքում քննարկվել են ներպետական քրեակատարողական օրենսդրության կատարելագործմանը և եվրոպական չափորոշիչներին դրա հնարավորինս համապատասխանեցմանը, պենիտենցիար և պրոբացիոն ծառայությունների գործունեության արդյունավետության բարձրացմանը, անձնակազմի կրթությանը, վերապատրաստմանը և պրոֆեսիանալիզմի բարձրացմանը, ազատությունից զրկված անձանց ռիսկերի գնահատմանն ու կառավարմանը, ցմահ ազատազրկման և այլ երկարաժամկետ ազատազրկման դատապարտված անձանց միայն պատժի հիմքով անջատ պահելու անթույլատրելիությանը, առանձնակի վտանգ ներկայացնող դատապարտյալների նկատմամբ իրավիճակային և տարբերակված մոտեցում ցուցաբերելուն, ազատությունից զրկված անձանց շրջանակներում արմատականացման և բռնի ծայրահեղականության երևույթների կամ դրսևորումների դեմ պայքարում արդիական գործիքակազմ ներդնելու հնարավորությունների քննարկմանը, ինչպես նաև Եվրոպայի Խորհրդի շրջանակներում պենիտենցիար համագործակցության զարգացմանն ու ամրապնդմանը վերաբերող հարցեր:

Բազմակողմ հանդիպման հիմնական նպատակն էր Եվրոպայի Խորհրդի անդամ պետությունների ներկայացուցիչների համախմբումը, դատապարտյալների պահման ռեժիմին վերաբերող հարցերի ուսումնասիրությունը, այս կապակցությամբ առաջավոր փորձի և լավագույն պրակտիկայի փոխանակմանն ուղղված իրական հնարավորության ստեղծումը, ներպետական օրենսդրության կառուցակարգերում նոր մոտեցումների ներկայացումը, Եվրոպայի Խորհրդի, ինչպես նաև Խոշտանգումների կանխարգելման կոմիտեի սահմանած չափորոշիչներին ըստ նպատակահարմարության դրանց տեղայնացման հեռանկարների քննարկումը, որոնք մեծապես կնպաստեն դատապարտյալների պահման ռեժիմի կառավարման արդյունավետության բարձրացմամը, ինչպես նաև ազատությունից զրկված անձանց

բացասական վարքագծի դրսևորումների և կրկնահանցագործությունների թվի նվազեցմանը:

Հանդիպման ընթացքում զեկույցներով հանդես են եկել պենիտենցիար և պրոբացիոն քաղաքականության մշակման ոլորտում հայտնի միջազգային փորձագետներ, ովքեր անդրադարձել են քրեակատարողական քաղաքականության արդյունավետության բարձրացմանն ուղղված մի շարք անկյունաքարային և խնդրահարույց հարցերի՝ առաջարկելով նոր մոտեցումներ և տեսակետներ: Մասնավորապես, ներկաների ուշադրությունը հրավիրվել է դատապարտյալների պահման ռեժիմի կառավարման ԵԽ չափորոշիչների սահմանման առանձնահատկությունների, ազատությունից զրկված անձանց ռիսկերի գնահատման և կառավարման, հատկապես այդ ռիսկերի և կարիքների գնահատման առաջնային գործիքակազմին, ռիսկային գործոնների և ռիսկերի հետ կապված կարիքների բացահայտման գործիքակազմին: Առանձնակի շեշտ է դրվել ռիսկերի գնահատման շարունակականության ապահովման անհրաժեշտության և անհատական ռիսկերի ու կարիքների գնահատման գործիքակազմի բաղադրիչ հանդիսացող մի շարք կառուցակարգերի վրա:

Հանդիպման շրջանակներում ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության պետը մասնակցել է քրեակատարողական համակարգի կադրային քաղաքականության զարգացում, քրեակատարողական ծառայության հոգեբանական ծառայության գործունեության կատարելագործում, դատապարտյալների հետ տարվող վերասոցիալականացման աշխատանքների կատարելագործում, պատժի հետագա կրման ծրագրում և հետաքրքրություն ներկայացնող այլ թեմաներով քննարկումների, որոնց մասնակցում էին նաև միջազգային հեղինակություն վայելող փորձագետներ, քրեական, քրեակատարողական և հոգեբանական գիտությունների անվանի գիտնականներ:

ՀՀ ԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ՊԵՏ, ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԳՆԴԱՊԵՏ՝ ԱՐՏՅՈՄ ՄԽՈՅԱՆ

20.05.2019թ.